

նանքը այնպէս, ինչպէս որ է, եւ ոչ ինչպէս այդ քացադրում են նրա հակառակորդները:

— Պրօֆ. Պարրոտի նամակները:

Եռաշառուր Արոլեանի անուան հետ կապուած պրօֆ. Պարրոտի նամակները, լոյս են տեսել „Deutsche Revue“-ի համարներում: Այդ նամակները Աղէքսանդր Ա. Ռուսաց կայսեր ուղղուած նամակներ են: Նրանցից երեւում է, որ Կայսրը շատ մօտ է եղել Պարրոտին եւ շատ անգամ նեղ համազանգեցնելով դիմել է նրա խորհրդին: Իսկ պատմութիւնը ցոյց է տալիս, որ Աղէքսանդրը ոչ միայն հարցնում էր ինչպիսի պրօֆէսօրի խորհուրդները, այլ եւ հետեւում էր նորանց: Բերքնք երկու օրինակ. Աղէքսանդր Ա-ը շնորհիւ իւր լուսաւորուած դաստիարակների եւ գլխաւորապէս շնորհիւ Լահաուպի, գեղեցիկ ծրագիրներով էր գահ բարձրացել: Այն ծրագիրներից գլխաւորն Ռուսաստանում սահմանադրութիւն մտցնելն էր: Սակայն սահմանադրութեան հակառակորդները կարողացան նրա վերայ այնպէս ազդել, որ նա վերջապէս հրաժարուեց իւր այդ դիտաւորութիւնից:

Պարրոտի մի նամակից երեւում է, որ նա սկզբունքով հակառակ շինելով սահմանադրութեան, այնու ամենայնիւ ինչպէրում է, համոզում է կայսեր շանել այդ քայլը եւ չհրաժարուի իւր անսահման իշխանութիւնից: Մի ուրիշ օրինակ. Սալէրանսկին Աղէքսանդրի տաղանդաւոր գործակիցներից մէկը թաղանթիւ թշնամիներ ունէր, որոնք կարողացան բարդել նրա վերայ այնպիսի մեղադրանքներ, որ կայսրը ստիպուած էր նրան մահու դատաւարտել: Բայց այդ վճիռը տալուց առաջ նա հարցնում է Պարրոտի կարծիքը: Սա խորհուրդ է տալիս կայսեր զդատաւարտել Սալերանսկուն մահու, առանց գործը լաւ քննելու: Իսկ որովհետեւ այդ ժամանակ կայսրը զբաղուած էր նապօւէօնի արշաւանքների գործով, ուստի Պարրոտը խորհուրդ է տալիս առ այժմ միայն արքայի ուղարկել Սալերանսկուն, իսկ յետոյ՝ գործը քննել որպէս հարկն է: Կայսրն այդպէս էլ անում է եւ Սալերանսկին ազատում է մահից: Յայտնի է, որ Նիկողայոս կայսեր ժամանակ Սալերանսկին ետ բերուեց արքայից եւ Ռուսաց օրէնքների ժողովելու գործում մեծ դեր խաղաց:



Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Հ Ր Ա Խ Է Ր :

«Արարատի» բաժիններից մէկը, որ ցարգ անխընամ էր թողուած, նոր խմբագրութիւնն ճոխացնել կամենալով՝ առանձին հոդատարութեամբ դիմեց մեր եկեղեցական պաշտօնեաներին եւ նրանց օժանդակութիւնը խնդրեց. սակայն այդ խնդիրը ցարգ աննկատելի մնաց եւ այդ մասին հարկ կայ մի առանձին հրաւերի:

Այսօր այդ հրաւերը կարգում ենք մենք բովանդակ հայ եկեղեցականութեան և մի քանի խօսքով յիշեցնում մեր խնդրի կարևորութիւնը:

Այն անքակտելի բարոյական կապը, որ կայ հայ ժողովրդի և նրա մեծագոյն սրբապայրի, Ս. Էջմի-

ածնի և Մայր Աթոռի մէջ, պէտք է անշուշտ մի նիւթական արտայայտութիւն ունենայ, Հնագոյն արտայայտութիւնների ձևերն դադարել են արդէն, այս խոստովանումները մենք ցաւ ի սիրտ, Հայ հաւատացեալների խմբերն այլ ևս չեն դիմում գէպի Այրարատ, գէպի Աղարշապատու կաթուղիկէն, գէպի Մայր Աթոռը, Ուխտաւորների անընդհատ շղթաները, որ ձգւում էին աշխարհիս չորս կողմերից գէպի Լուսաւորչի Գահը, կարուել են և այլ ևս հայ հեռաւոր քրիստոնեան իւր շրթունքներով չէ մերձենում նուիրական սրբութիւններին, Յաւալի է այս տխուր փաստի գոյութիւնը, բայց մենք չենք կարող աչքներս փակել, չը տեսնել ու չարձանագրել այդ:

Եթէ աչքաբաց լինել ցանկանք և տեսնենք թէ ի՞նչպիսի ջերմեռանդութեամբ այսօր միւս քրիստոնեաները ուխտագնաց են լինում գէպի իրենց նուիրական վայրերը, այն ժամանակ միայն կը հասկանանք մեր անտարբերութիւնը:

Այ մի փաստ, ոչ մի առարկութիւն և ոչ մի պատճառ կարող չէ արդարացնել մեր այս ընթացքը և եթէ մէկը փորձէ այդպիսի պատճառաբանութիւններով արդարացնել այդ անտարբերութիւնը, չէնք դանդաղիլ հին և թշուառութեան դարերից առնուած օրինակներով նրան համոզել, որ սըխալ է մեր այժմեան վարմունքն ու կորստաբեր, Իայց այս առթիւ դեռ շատ պիտի զբաղեցնէ «Արարատ»-ն իւր ընթերցողներին:

Հետաքրքրութիւնը մեր կեանքի խթանն է, ոչ մի գործ մարդս առանց հետաքրքրութեան չէ անում, ուստի հայ եկեղեցականութեան ճիգը պիտի լինի հետաքրքրութեան շնորհիւ հեռաւոր եղբայրներին շղթայել:

Առանց ճանաչողութեան չը կայ հետաքրքրութիւն. հայ ազգը պէտք է ճանաչէ, պէտք է գիտենայ իւր եկեղեցու վիճակը, որ հետաքրքրուի նըրանով. Սակայն ո՞վ պիտի տայ այդ ծանօթութիւնը, ո՞վ և ի՞նչպէս պիտի նպաստէ, որ հայ եկեղեցու արդի վիճակի ուղիղ և ճիշդ ճանաչողութիւնը ընդհանրանայ, ո՞չ ապաքէն հայ եկեղեցականութիւնը և նրա բերան «Արարատ»-ը, Հայ ժողովուրդն իրաւունք ունի պահանջելու, որ «Արարատ»-ը ստոյգ և անընդհատ տեղեկութիւններ տայ հայ եկեղեցու հեռաւոր և մերձաւոր կեանքից, որ նա պատկերացնէ մեր ազգային և եկեղեցական կեանքը կատարելապէս: Միմիայն այդպիսի ճանաչողութեամբ կապուած կը լինին ցրուած հայ եկեղեցիք և կը հետաքրքրուին միմեանց վիճակով, իսկ այդ հետաքրքրութիւնից կը ծագէ այն բարերար աջակցութիւնը, որից զուրկ ենք մենք այսօր:

Եկեղեցական կեանքը բաղմադիմի արտայայտութիւններ ունի, իւրաքանչիւր կենդրոնում և իւրաքանչիւր յետ ընկած գիւղում կատարուում են աչքի ընկնող երեւոյթներ, որոնց ընդհանուրին ծանօթացնելը անհրաժեշտ պահանջ է և աղբիւր շատ տեսակ արգասաւոր գործերի, Հայ պատրիարքութիւններն, առաջնորդութիւնները և վանահայրութիւններն այն կենդրոններն են, ուր կատարում են և պիտի կատարուին ընդհանուրի յառաջադիմութեան նպաստող գործեր, ահա այդ գործերին և դրանց հեղինակ եկեղեցականներին ու աշխարհականներին պիտի ծանաչէ հայ ժողովուրդը «Արարատ»-ի շնորհիւ: Ոչ այսչափը միայն, շատ են այն ուրախառիթ և տխրադեցիկ երեւոյթները, որ կատարուում են խուլ անկիւններում, մոռացուած հայ գիւղերում, ահա այդ ամէնի մասին պէտք է զեկուցումն տայ «Արարատ»-ը: Այլ թերթերը այդ նպատակով թղթակիցներ են պահպանում, իսկ «Արարատ»-ի ի պաշտօնէ թղթակից է ամէն մի քահանայ, վարդապետ և առաջնորդ և ուսուցիչ, որոնց ուղղակի պարտքն է ծանօթացնել ընդհանուրութեան իրենց յանձնուած հօտի եկեղեցու, վանքի, վիճակի և դպրոցի հետ:

Չենք կամենում առանձնապէս յիշել, որ այդ տեսակ զեկուցումներն բացի հասարակական օգտից և մասնաւոր ու անձնական օգուտներ առաջ կը բերեն մեր եկեղեցականների համար, որոնց գործերը կը փայլին իսկական լուսով և շին վարագուրուել:

Այս հրաւերն ուղղում ենք մենք մանաւանդ մեր հեռաւոր եղբայրակիցներին, ծածկաստանի և Պարսկաստանի հողերականութեան, որոնց աջակցութեանն առանձնապէս կարօտ է խմբագրութիւնս: Այսօր ամէն մի հայ ծարաւի է իւր եղբայրակիցների վիճակի ճշմարիտ ծանօթութեան, տանք ուրեմն այդ ծանօթութիւնն, որպէս զի կատարած լինինք մեր պարտքը և ծառայած Հայաստանայց եկեղեցու բարգաւաճման գործին:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ .
Գ. Ճ Ե Մ Ա Ր Ա Ն .

Դէորդեան Ճեմարանի վարչութիւնը ըստացել է հետևեալ զրութիւնը Սիմֆերոպոլի նահանգական դատարանի դատախազից, 1895 Վիտոր. 24: Ա 1936.

Պերեկոպ քաղաքի վաճառական Ղաղար Յակոբեան Բերքերեանի կտակից, որ հաստատուել է Սիմֆերոպոլի նահանգական դատարանը 1894 թ.

զեկտեմբերի 13-ին, երևում է որ հանգուցեալ Բերքերեանն ի միջի այլոց կտակել է.

« 11) Բերքերեանի անուան մի թոշակ սահմանելու էջմիածնի հողերը դպրանոցում Թէոդոսիայի կամ Ցաւրիկեան նահանգի միւս քաղաքներից մէկի մի հայ տղայի համար երկու հարիւր յիսուական ուսուցի տարեկան, և եթէ Բերքերեան անուան թոշակաւորներն իրանց ուսումն աւարտելուց յետոյ քահանայ ձեռնադրուին՝ տալ իւրաքանչիւրին սկզբնական պիտոյքներն հոգալու համար հարիւրական ուսուցի»:

Յայտնելով այս մասին Հողեր Պարանոցից, պատիւ ունիմ աւելացնելու, որ այս կտակի համար նշանակուած կտակահատարներն ապրում են—Տիտուլիարնի սովետանիկ Սիրաֆիմ Միսիրովը Սիմֆերոպոլ քաղաքում իսկ Մարտին Գրիգորեիչ Զայցելի, Կարպ Խրիստոֆորովիչ Կարակաչը, Իւան Կարպովիչ Սելինովը, Օսիպ Օսիպովիչ Ալթունջին և Եգոր Ալադիմիրովիչ Չեմբերջին— Թէոդոսիայում:

Ա. ԲՈՒՍԱՀԱՅՔ.

ԵՐԵՎԱՆԻ ԹԵՄԻ ԴՊՐՈՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ.

Մեր դպրոցների կեանքին փոքր իշատէ ծանօթ մարդկանց համար պարզ է՝ թէ ինչ բաղմադիմի արդեւքներ կան այդ դպրոցների յառաջադիմութեան և նոցա գործունէութեան կանոնաւոր ընթացքի դէմ: Համոզուած լինելով որ վէճքը բուժելու համար պէտք է խնայել բանալու այն, մենք կաշխատենք ունեցած ճիշդ տեղեկութիւններից քաղելով ներկայացնել այժմ Երևանի ընդարձակ թեմի ծխ. դպրոցների ներքին կեանքի պատկերը, Սկսում ենք տնտեսական վիճակից:

Գպրոցական կեանքում ամենամեծ խնդիրներից մէկը, գուցէ և առաջինը, տնտեսական վիճակն է: Գպրոցական եկամտի պակասութիւնը այն մաշող հիւանդութիւնն է, որ չի թողնում դպրոցն աճի ու զօրանայ: Մինչև 1894 թուականը դպրոցների եկամուտներն էին եկեղեցական դրամների օժանդակութիւն, եկեղեցու հողերից ստացուող նրպաստ, աշակերտական թոշակ, հասարակական վեճիոներով կազմուած եկամուտներ. ինչպէս կը ռոտորդից, վաճառուող անասուններից, խանութներից պարտադիր վճար ևլն. ևլն: Իսկ թուականից այդ աղբիւրները ցամաքեցան և դպրոցները մնացին եկեղեցու օգնութեան, թոշակների և կամաւոր նուէրների յուսով: Գոցանից առաջինը իրաւամբ Եկեղ-ձխակ. դպրոցների անդրանիկ աղբիւրը պիտի